ԵՐԳԵՐ ՀՈՂԱՑԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վերևում մենք խոսեցինք Նոր Նախիջևանի բոլոր գյուղերի ընդհանուր վեճի մասին քաղաքի հետ, Հարությունի Խալիբյանի քաղաքագլուխ լինելու ժամանակ։ Բացի այդ, գյուղերը իրենց մեջ ևս ունեին սահմանագծային վեճեր։ Վերջին սահմանագրումը գյուղերի մեջ կատարվել է 1886 թ. ըստ որի Մեծ Սալա գյուղը վերցրել է Սուլթան Սալա գյուղի հողերի մի մասը, սուլթանսալացիք դրա փոխարեն վերցրել են Թուփտի գյուղի հողերի մի մասը, իսկ Թուփտեցիք դրա փոխարեն վերցրել են Զալթրի հողերի մի մասը։ Զալթրցիք անբավական էին նրանով, որ պակասել էր նրանց հողի ընդհանուր չափերը, պակասել էր հողի լայնությունը և մեծացել նրա երկարությունը։ Զալթրցիք երկար ժամանակ ուժով դիմադրում էին Թուփտեցոց, թույլ չէին տալիս բռնել նրանց հատկացված հողամասը։ Թուփտի գյուղի լիազոր Պողոս Բայանը երկրաչափների և ռուս իշխանության օգնությամբ ստացել էր Թուփտիին հատկացված հողամասը։ Այդ առթիվ եղել են երգեր, որոնք այժմ մոռացված են. մեզ հասել են միմիայն երգերի բեկորները, որոնք մեզ հանձնեցին Գևորգ Ջալաջյանը և Կիրակոս Աթոյանը։

Հաքա Թումիան, դուսը լուսացավ,
Ոտքիս մաղը մրսեցավ,
Բային Բողոսին հաստ փորը,
Էգավ, մգավ մեր շոլը։

Բային Բողոսին հաստ փորը
Դարավ խազախին մեր շոլը,
Բային Բողոսին հաստ խաֆան,
Դարավ խազախին մեր խարասաբան։

Մեր ափանին գերան
Թուփցոց եզը ալաման
Գայնած գուդե մեր քուլթան,
Շուտով ալ գելլին սաբան։

1923 թվականին Զալթր գյուղում մեծ աղմուկ բարձրացավ հողաբաժանման շուրջը։ 1919 թվականին չալթրցիք Ստոլիպինի օրենքի համաձայն կատարել էին հողաբաժանում և ամեն մի գյուղացուն տվել որպես հավիտենական սեփականություն նրան պատկանած հողամասը։ 1919 թվականից հետո ծնվածները հողաբաժին չունեին։ Գյուղում ապրող ռուս ազգաբնակչությունը ևս չուներ հողաբաժին, որովհետև նրանք անդամ չէին գյուղի հասարակության։ Որոշված էր կատարել նոր հողաբաշխում սովետական սկզբունքներով չունևորներին տալ հողը գյուղի մոտերքը, իսկ ունևորներին՝ հեռուն։ Ունևորները անբավական էին, պահանջում էին թողնել 1919 թվականի հողաբաժանումը։ Այդ առթիվ հորինված է հետևյալ երգը։

ԿՈՒԼԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ[4]

Կուլակները մեգգեղ գըլան,
Խորհուրդ գանին իրենց մեջը,
Բեթեր չուզին հեռուն էլլել,
Ուրախ-զվարթ կեղը թողնել,
Առանց խարիբգիթի մնալ,
Ինքերը իրենց ձեռքով պանել,
Ադոր համար գիշեր ցերեգ,
Քոշա-բուճախ թուփ գըլան,
Սեքռեթները մեյդան չին հանիլ,
Խորհուրդ գըտեսնուն իրենց մեջը,
Նոր որոշումներ գըհանին կեղը մնալու։
Կոմունիստները խափխան տրած
Գիշեր, ցորեկ մուխայիթ գլան,
Կուլակներուն արաձները,
Սեքռեթ պաներ դատաձները,
Ադ ալայը նաքա դիմանան
Ադ ալայը մեյդան գըհանին։

---

4 Այդ երգը մեզ տվել է Գևորգ Ջալաջյանը։

Օրին մեզ օրն այլ գիշերվա վախտին
Ադ աղաներուն սելսավեթ գրգանչին,
Էրկան-պարակ հարցմունք գանին,
Խաբահաթները դրգրին
Ալային մեկտեղ թոփ գանին,
Ռոստով երեսներեք գրգանին։

ՍԱՄԲԵԿ ԳԵՂԸ

1880 թվականին Նոր Նախիջևանի գաղութի հայ հասարակությունը, որտեղ մրտնում էին ինչպես քաղաքը, այնպես էլ գյուղերը, տոնեց իր գոյության հարյուրամյա հոբելյանը։

Այդ պահին քաղաքի և գյուղերի հայ հասարակությունը ուներ 6.500 դեսյատին հողի ֆոնդ, որ մնացած էր 1779 թվականի նոյեմբերի 14-ին հայ գաղութին հատկացված հողերից։ Այդ ֆոնդի տված արդյունքը պատկանում էր ամբողջ գաղութին։ Այդ ֆոնդը գտնվում էր Սամբեկ գետի ձախ ափին։ Հոբելյանի կապակցությամբ քաղաքային դուման, հակառակ հինգ հայ գյուղերի կամքին, որոշեց այդ հողամասի վրա, քաղաքի սապանճիների կարիքը բավարարելու նպատակով հիմնել վեցերորդ հայ գյուղը, որի անունը դրին Կատարինավան, բայց ժողովուրդը անվանում էր նրան Սամբեկ։

1779 թվականի կայսերական հրովարտակի համաձայն այդ գյուղի հասարակության անդամագրված ամեն մի արական սեռի շունչ ստացավ 30 դեսյատին հողաբաժին։ Անդամագրվեցին 250 շունչ։ Անդամագրվողների մեծ մասը մանր վաճառականներ էին։ Շատ քչերը տեղափոխվեցան գյուղ։ Գյուղ գնացողներից շատերն էլ իրենք չէին զբաղվում հողի մշակմամբ։ Ինչպես քաղաքում մնացածների, այնպես էլ գյուղում հաստատվածների մեծ մասը կապալով էին տալիս իրենց հողաբաժինները Զալթիրը և Թոփտի գյուղերի սակավահող գյուղացիներին։ Ամեն մի հողաբաժին տալիս էր 400—500 ռուբլի տարեկան վարձ։ Կային ընտանիքներ, որոնք ունեին 6—7 հողաբաժին։ Կապալառուները տալիս էին նրանց հազարներ և նրանք հանգիստ ապրում էին քրեհով։

Երբ որ հասարակության անդամների նորածին երեխաների թիվը մեծացավ, հողաբաժնի քանակը սկսեց նվազել, 30 դեսյատինից հասավ 21 դեսյատինի։ 1906 թվականին Ստոլիպինի օրենքի համաձայն սամբեկցիք հաստատեցին ամեն մի արական շնչի վրա 21 դեսյատին և վերջ դրին համայնական հողատիրությանը, իսկ երբ 1910 թվականին իրավունք ստացան հողաբաժինները ծախելու, սամբեկցիք սկսեցին շտապ ծախել իրենց հողերը։ 4000—5000 ռուբլի էր մարդաբաժին հողի գինը։ Քաղաքում ապրող «սամբեկցիք» իսկույն ծախեցին, նրանց օրինակին հետևեցին և գյուղում ապրողները։ Ծախված հողերը գնում էին մյուս հայ գյուղերի ունևոր հայ գյուղացիք։

Այսօր այդ գյուղում մնացել են միմիայն 3 հայ ընտանիք, որոնք աշխատում են կոլխոզում։

Այս գյուղի մասին հայ շառխբճիները ունեին շատ երգեր. նրանցից մեկը գյուղը անվանում էր Արշակավան։ Այսօր այդ երգերը մոռացված են, մենք մեջ ենք բերում մեկը, որը տվեց մեզ Սամբեկի նախկին ընակիչ քիմիկոս Կարապետ Հովհաննեսի Էկնատիոսյանը։

ՍԱՄԲԵԿՑԻՔ

Սամբեկի գերան գա մեզ հայ կեղ,
Անունը տրիլ ին՝ Թեմբելի դեղ,
Ձերե իլինք բոշ-բոշազ քաղքցի
Ֆողին խաթռին կրվեցավ կեղացի։

Կրվելը կրվեցան, ֆողն ալ ստացան,
Ամա քիչերը էլլան, կեղ էգան,
Էգողներն ալ ցանի կորձին չըգբան,
Ձերե աղեթ էղավ ֆողի քիրան։

Քսանումեգ դեսեատին է մաշգաբաժին,
Ջորս-հինգ հարյուր քիրա գուդա դարին.
Առանց խլապոտ ստագը ոտքդ կուկա,
Ադկից ալ աղեդ դահա ի՞նչ գըլա։

Ի՞նչ պետք է արբա, սաբան, եղ ու ծի,
Ամենը ունի Զալթրի կեղացին,
Նա գրվարե, գրցանե, գրհնձե,
Հինգ հարուր մանեթի ձեռքդ կըբաքնե։

Աղիաթ Բեդրոսին զենգին դղան
Սամբեկի կեղացի հեսաբ գըլա.
Թանգնոց խալի, ագռա մարգրիդ կըձախե,
Կեղացիեն ալ ֆողի քիրա գառնե։

Քաղաքի աղաներ, մեծամեծներ,
Ասպես սուդ է շիդակութինը ձեր,
Խոշտ ֆողագործը մնաց առանց ֆողի,
Մեծ բազիրկանին արիք դեր ֆողի։